**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**15.04.2026 թ. կնքված N ԱՀԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-2 գնման պայմանագրի**

ք. Երևան «12» «մայիսի» 2026թ.

Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամը, ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ս. Խարազյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԻՔՍ-ԱՐԹ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Աբովյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 15.04.2026թ. կնքված N ԱՀԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.8 կետը և Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 3-րդ չափաբաժնի մասով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 15 (տասնհինգ) օրացուցային օրով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

***3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամ | «ԻՔՍ-ԱՐԹ» ՍՊԸ |
| ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 10 | ք. Երևան, Հր. Քոչարի փող. 13/1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Ինեկոբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900018010380 | Հ/Հ 2050022246781001 |
| ՀՎՀՀ 00542809 | ՀՎՀՀ 01237555 |
| Ս. Խարազյան ________ (ստորագրություն) Կ.Տ. | Հ. Աբովյան ________ (ստորագրություն) Կ.Տ. |